ռովութիւնս երկուց ազգաց ։ Սակայն արգելաւ Իլամն անդ 'ի ներքս առ Արքայի ամիսս 8 , և աւուրս 13 ։

Յերկարել գործոյն անկան 'ի տարակուսանս գլխաւորք ազգին , եւ վարանէին տրտմութեամբ 'ի միտս իւրեանց , զի մի գուցէ դաւ ինչ գործեսցի 'ի հակառակորդաց անտի . և 'ի հարցանել բարեկամաց՝ ակնարկէին միայն լռել ։ Յամենայն գաւառաց և քաղաքաց թախանձանօք խնդրէին լուր աւետեաց . բայց նոքա տարակուսեալ էին թէ զինչ պատասխանի տայցեն ։ Աղաղակ միաբանաց Աթոռոյն Երուսաղէմի յերկինս ելանէր , զի 'ի բռնութենէ Յունաց նեղեալ և տագնապեալ հոգիս էին ապաստան . եւ յորէ օր սպասէին լրոյ աւետեաց և գալստեան հրովարտակին , այլ նոքա յառաջադրէին միայն համբերել ։ Յոյնք խայտային թէ խափանեցաւ Իլամն եւ այլ ոչ եւս յիշէ զայն Արքայ ։ Սակայն արքունի ճարտարապետն Գրիգոր Ամիրայ քաջալերեալ յուսադրէր զիշխանաւորս ազգին յորդորական բանիւք , կալ անվրդով և մի կասկածիլ երբէք . զի միտք Արքային ասէր՝ անդրդուելի է . և փոյթ նորա չառնել ինչ ընդդէմ իրաւանց . նմին իրի պարտ է համբերել երկայնմտութեամբ . քաջ գիտէր զպատճառ արգելման Իլամին , զի ներքին խորհրդակիցն Արքայի բարուք հմտացեալ մտաց հրովարտակացն խելամուտ առնէր զԱրքայ , և առաջնորդէր յամենայն իրս արքունի . այրս այս մինչ 'ի վախճան գործոյն աշխատեալ պատճառ եղեւ փրկութեան Հայոց ։

Յետ պատմելոյ մեր զայս ամենայն անցս որ անցին 'ի թագաւորեալ քաղաքին , դարձցուք այժմ ասել զդէպսն որք պատահեցան յԵրուսաղէմ ։

Եհաս նոր Դատաւորն 'ի քաղաքն Ս . մեծամեծս խոստանայր Հայոց միայն բանիւ , որպէս արարեալ էր 'ի Կոստանդինուպօլիս կատարել զխնդիրս ազգին , 'ի Ս . Աստուածածին և 'ի Ս . Յարութիւն ։ Առ զսահմանեալ տուրս իւր , առ նաեւ 12,000 դահեկանս , և 'ի Յունաց 150 քըսակս արծաթոյ ։ Եւ ըստ խնդրոյ Թէոդորոս Պատրիարքի կոչեաց առ ինքն զերիս հետեւակ ազգս , և 'ի բանից նոցա գրեաց հէօճճէթ . թէ սոքա 'ի սկզբանէ անտի հետեւակ են ազգին Հայոց , և վասն այսր խնդրոյ էառ 3500 դահեկան , և այն բազում աղաչանօք ։